ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1963 Общественные науки

Լ. Ա. Բարսեղյան

ՀԱՅԱՍԱ-ԱԶԶԻԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայասա-Ազզիի սոցիալ-տնտեսական պատմությունը գրեթե չի ուսումնասիրված, չհաշված մի շարք արևելագետների թռուցիկ դիտողություններ։ Խեթական թագավորներ Սուպպիլուլիումայի (1390—1355) և Մուրսիլ II-ի (1345—1320) դաշնագրում ու տարեգրություններում պահպանված վկայությունները[1] Հայասա-Ազզիի մասին, որոշ չափով հնարավորություններ են ընձեռում վերականգնելու նրա սոցիալ-տնտեսական պատմության առանձին կողմերը։

Հայասա-Ազզիի կազմի մեջ էին մտնում շուրջ տասը երկրներ, ցեղային միություններ, որոնք իրենց մեջ էին ընդգրկում բազմաթիվ բնակավայրեր ու ամրություններ։ Քաղաք-երկրների կամ ցեղային միավորումների գլուխ էր կանգնած առաջնորդը կամ թագավորը, որն օժտված էր մեծ իրավունքներով, բայց պատասխանատու էր ավագների խորհրդի առջև և փաստորեն իրականացնում էր ավելի ուներ, արդեն հարստություն կուտակած ցեղային ավագանու շահերն ու պահանջները։ Խեթական թագավորները հաշվի էին նստում այդ երկրների թագավորների հետ, ցանկանում էին սիրաշահել նրանց, խոստանում էին օգնել և առանձին դեպքում էլ ամուսնական կապերի մեջ էին մտնում նրանց հետ։

Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան մասում կազմավորված Ալշի երկիրը[2] լրջորեն դիմագրավում էր ոչ միայն Միտանիի թագավորությանը այլև խեթերին։ Խեթական թագավոր Սուպպիլուլիուման քաղաքական նկատառումներով Իսուվայից[3] հարավ ընկած մի քանի երկրներ նվաճելուց հետո նվիրում է Ալշեի թագավոր Անթարաթլիին[4]։

Անթարաթլիին այսպիսի զիջումներ անելը անշուշտ պայմանավորված էր նրա քաղաքական իշխանության և հեղինակության ամրապնդման հետ, որն արդեն հավանարար անջատվել էր համահավասար, երբեմն նրան իր կամքը թելադրող ցեղային ավագանիից։

Նույնպիսի երևույթ է նկատվում նաև Հայասայի հյուսիս-արևմտյան հարևանների՝ կասկայցիների մոտ։ Մուրսիլ II-ը իր տարեգրության մեջ հիշատակում է, որ կասկայական ցեղային միության առաջնորդ, Տիբիա երկրի

---

[1] J. Friedrich, Staatsvertrage des Hethitischen-Reiches, II, „Mitteilungen der Vorderasiatisch-Aegyptischen Gesellschaft", 1930, № 34, A. Goetze, Die Annalen des Mursilis, „Mitteilungen der Vorderasiatisch-Aegyptischen Gesellschaft", 1933. № 38.

[2] *Ալշե երկիրը տեղադրվում է պատմական Հայաստանի Աղձնիք նահանգում, Սասունի լեռների շրջանում։*

[3] *Իսուվա երկիրը տեղադրվում է պատմական Հայաստանի Ծոփք նահանգում։*

[4] E. Weidner, Politische Dokumente aus Boghazköi, Berlin, 1923, էջ 9.

թագավոր Պիխխունիան իր երկիրը «կառավարում էր» կասկայցիների սովորություններին անհամապատասխան ձևով՝ թագավորակերպ (Pi-ih-ḫu-ni-ia-aš--sa LUGAL-ud-tim i-va-ar), մինչդեռ Կասկա երկրում ընդհանրապես ընդունված չէր մեկ մարդու իշխանություն[5]։ Այլ պատկեր է նկատվում Հայասա-Ազզիում։ Այստեղ թագավորը չնայած խոշոր հարստություն է կուտակել, այնուամենայնիվ, սուվերեն ժառանգական իրավունքից ամբողջովին չի կարողանում օգտվել։ Նրա իրավունքները դեռևս սահմանափակվում են ավագանու խորհրդի կողմից։ Հայասական թագավորը այգիների, հողային տարածությունների և ստրուկների տեր էր։ Ինչպես Սուպպիլուլիումայի հետ կնքած դաշնագրում էր ասվում, Հայասայի թագավոր Խուկկանան ուներ մեծ հողային հարստություն, ծառաներ և ռպասուհիներ[6]։ Խեթերի դեմ մղվող պատերազմներում Խուկկանան զգալի հաջողությունների էր հասել։ Կասկայցիների հետ միասին նա նույնիսկ հարվածի տակ էր դրել խեթական թագավորության մայրաքաղաք Խաթթուսան։ Երկարատև պայքարից հետո խեթական թագավոր Սուպպիլուլիուման բանակցությունների մեջ մտնելով Խուկկանայի հետ, նրան կնության տվեց իր քրոջը։ Այսպիսի հանգամանքները անհամեմատ էլ ավելի էին բարձրացնում Խուկկանայի հեղինակությունը և նպաստավոր պայմաններ ստեղծում ժառանգական, իշխանապետական իրավունքներ ձեռք բերելու համար։ Այս տեսակետից միանգամայն հետաքրքրական է Սուպպիլուլիումայի և Խուկկանայի դաշնագրի այն մասը, որտեղ խեթական թագավորը հանդես է գալիս հետևյալ առաջարկով. «Ուրեմն դու, Խուկկանա բարեկամաբար Արեգիս օգնիր, Արեգիս ճանաչիր և ուրիշ որևէ մեկին մի ընդունիր։ Նաև ես՝ Արեգս դրանից ելնելով, որպես բարեկամ կպաշտպանեմ քեզ, ինչպես նաև որդիներիդ և որդիս էլ որդիներիդ պետք է պաշտպանի»[7]։

Իր քրոջը կնության տալով Հայասայի թագավորին, Սուպպիլուլիուման ցանկանում է վավերացնել Խուկկանայի և նրա որդիների ժառանգական իրավունքները, որի համար էլ խստորեն պահանջում է, որ «Հայասայի մարդիկ» (LU^MES KUR^URU Ha-ia-sa-aš) նույնպես հաշվի առնեն այդ հանգամանքը[8]։

Սուպպիլուլիումայի և Խուկկանայի միջև կնքված դաշնագրի առաջին մասը ուղղված է միմիայն Հայասայի թագավորին, իսկ երկրորդ մասը՝ «Հայասա երկրի մարդկանց» և ոմն Մարիյայի։ Դաշնագրի վերջին մասում Մարիյան ու «Հայասա երկրի մարդիկ» ստանձնում են նույն պարտավորությունները, ինչ որ վերցնում էր Խուկկանան, իսկ խեթական թագավորը պարտավորվում էր ապագայում իրեն պաշտպանելու դեպքում պաշտպանել նաև Մարիյային և «Հայասայի մարդկանց»։

Մեր կարծիքով դաշնագրում հիշատակվող Մարիյան Խուկկանայի որդին էր, և նրա ժառանգորդը, որին էլ Սուպպիլուլիուման խոստանում էր մշտական օգնություն ցույց տալ, դաշնագրում նրան առանձին տեղ հատկացնելով։ Դիմելով Մարիյային, Սուպպիլուլիուման պահանջում է. «...Դու Մարիյա, եթե այս խոսքերը, որոնց համար ձեզ երդվեցնել տվեցի, չհարգեք այս եր-

[5] E. Forrer, Die Boghaz-koi-texte in Umschrift, Leipzig, 1926, II (հետագայում՝ 2 BoTU), 48, III, § 34.

[6] J. Friedrich, Staatsvertrage, § 32.

[7] Նույն տեղում, § 5։

[8] Նույն տեղում, § 12։

դումները թող քո անձը, քո կանանցով, զավակներով, եղբայրներով, արտերով, այգեստաններով ու խոպաններով, արջառներով, ոչխարներով և ունեցած չունեցածով միասին, թող անմիջապես ոչնչացնեն ու սև հողի տակ անեն»[9]։

Ն. Ադոնցը հայասական ցեղային միության գլուխ կանգնած այս առաջնորդին համեմատում է խեթական թագավորի հետ և գտնում է, որ նրանք հավասարազոր կառավարիչներ էին, որոնցից և ոչ մեկին առավելություններ չի կարելի տալ[10]։

Հայասական մեկ ուրիշ թագավորի մասին վկայություններ են տալիս խեթական թագավոր Մուրսիլ II-ի տարեգրությունները, որտեղ հաճախակի հիշատակվում է Աննիյան, որպես Ազզի քաղաքի թագավոր ([1]An-ni-ia LU-GAL[URU]Az-zi)[11], Ազզի քաղաքի երկրի տեր ([EN KU](R[URU] Az)[-zi-ma-mu...])[12], Ազզի երկրի տեր ([1]An-ni-ia-as EN KUR Az-zi)[13]։

Ազզիի թագավոր Աննիյան մշտական հարձակումներ էր գործում խեթական սահմանների վրա, մեծ թվով գերիներ և անասուններ էր տեղափոխում Հայասա։

Մուրսիլին միայն երեք տարիների պատերազմներից հետո հաջողվեց իրեն ենթարկել հայասացիներին։ Եթե Մուրսիլ II-ի դեպի Հայասա-Ազզի կատարած արշավանքների սկզբնական շրջանում, նրա իշխանության յոթից իններորդ տարիներում Հայասայում թագավորում էր Աննիյան, ապա Մուրսիլի տասներորդ արշավանքի ժամանակ, երբ Հայասա-Ազզին վերջնականապես ենթարկվում է խեթերին, խեթական թագավորի հետ Հայասայի կողմից բանակցությունների մեջ է մտնում ոչ թե Աննիյան, այլ մեկ ուրիշը՝ Մութթին, Խալիմանա քաղաքից։ Մուրսիլի տարեգրության այդ մասում պատմվում է. «Երբ գարունը եկավ, կարգավորելու համար ես գնացի Ազզի քաղաքի երկրի վրա։ Բայց հենց որ Ազզի քաղաքի մարդիկ լսեցին, որ Արեգը գալիս է, ապա Ազզի քաղաքի մարդիկ ինձ դիմավորելու համար ուղարկեցին տղամարդու՝ Մութթիին Խալիմանա քաղաքից և ինձ հետևյալը հայտնեցին. «Տեր, ինչպես առաջ էլ դու մեզ ոչնչացրել էիր, ապա մեր տեր, այլևս մի արի, իսկ մեզ, մեր տեր, ծառայության վերցրու»[14]։

Ինչպես երևում է Աննիյաի անհաջող ձեռնարկումները խեթերի դեմ հավանաբար վատ էին անդրադարձել ցեղային միության վրա և Հայասայի ավագների միջամտությամբ նա իր տեղը զիջել էր ավագանու մեջ մեծ հեղինակություն վայելող, ինչպես և հարստություն կուտակած մի այլ ցեղային առաջնորդի՝ Մութթիին, որը Խալիմանա քաղաքի տերն էր։ Այսպիսին են ահա խեթական աղբյուրների հաղորդած տեղեկությունները Հայասա-Ազզիի թագավորների ու նրանց գործունեության մասին։

Հայասա-Ազզիում ցեղային միության առաջնորդի կամ թագավորի կողքին գոյություն ուներ և գործում էր ցեղի ու տոհմի կյանքում մեծ տեղ նվաճած, արտոնություններով և իրավունքներով օժտված ցեղային ավագանին։

---

[9] Նույն տեղում, § 15։

[10] N. Adontz, Histoire d'Arménie, Paris, 1946, էջ 32։

[11] A. Goetze, Die Annalen des Mursilis, § 33, III, 93.

[12] Նույն տեղում, § 13, IV, 10։

[13] Նույն տեղում, § 33, IV, 25։

[14] 2BoTU, 58B, IV, § 107.

Ցեղային ավագանուն կամ ավագների խորհրդին էր վերապահված ցեղային միության առաջնորդի ընտրությունների անցկացումը, նրա իրավունքների և գործունեության վերահսկումը, իշխանազուրկ անելը և նոր թեկնածուի առաջադրումը։

Խեթական արձանագրություններում հիշատակվող «Հայասայի մարդիկ» և «երկրի ավագները» (LU^MES^ SU.GI KUR^TI^)[15] ակտիվորեն մասնակցում և միջամտում էին ոչ միայն միության ներքին, այլև արտաքին գործերին։ Նրանք կարող էին ազդել պատերազմների ընթացքի վրա, զինադադար կնքել, բանակցությունների մեջ մտնել թշնամու հետ։

Մուրսիլ II-ի արշավանքները, երբ արդեն լուրջ վտանգ էին առաջացրել և սպառնում էին հայասացիներին, ցեղային ավագանին հաշտության առաջարկով բանակցություններ սկսեց խեթական թագավորի հետ։

«Երբ ազգիները տեսան,—պատմում է Մուրսիլ II-ը, որ իրենց բերդաքաղաքները պատրաստվում եմ գրավելու, Ազգիի բնակիչները, որ թաքնվել էին բարձր ու ժայռոտ լանջերում, սարսափի մատնվեցին։ Այդ երկրի ավագները ինձ ընդառաջ գալով ոտքերս ընկան ու ասացին. «Տեր, մեզ մի ոչնչացրու։ Տեր, մենք քեզ կհպատակվենք և այսուհետև մեր տիրոջը կանոնավոր կերպով զորք ու հեծելազոր կտանք»[16]։

Հայասական ցեղային ավագանուն զուգահեռ մի ինստիտուտ կարելի է գտնել խեթերի մոտ, որտեղ այդպիսի երևույթ նկատվում էր հին թագավորության շրջանում (18—16-րդ դդ. մ. թ. ա.), երբ դեռևս խեթական հասարակությունը ստրկատիրական չէր և սոցիալական շերտավորումը չէր խորացել։ Խեթական թագավոր Տելեպինի ժամանակ (17-րդ դ.) թագավորին կից գործում էր ժողովը կամ ավագանու խորհուրդը՝ panku-ն, առանց որի հետ հաշվի նստելու, թագավորը չէր կարող որևէ խոշոր միջոցառումներ ձեռնարկել[17]։

Panku-ի գործունեությունը բնորոշ է խեթական թագավորության միայն հին շրջանին, երբ դեռևս թագավորը ինքնուրույնություն հանդես բերելու լայն հնարավորություն չուներ[18]։

Խեթական panku-ի մեջ հիմնականում մտնում էին «հզոր մարդիկ»[19]։ Ըստ Տելեպինի արձանագրությունների, panku-ին իրավունք էր վերապահվում դատել պաշտոնյաներին և նշանավոր մարդկանց, հեռացնել նրանց գրաված պաշտոններից, կատարել նաև պաշտամունքային արարողությունները ղեկավարող օրգանի պարտականությունները։

Խաթթուսիլ I թագավորի երկլեզվյան արձանագրության մեջ, որտեղ խոսվում է ապագա թագավոր Մուրսիլ I-ի պարտականությունների մասին, ասվում է. «(եթե) դու [տես]նես որևէ հանցագործություն կամ (եթե) որևէ մեկը աստծո դեմ կմեղանչի, ապա (բոլոր դեպքերում) դու հարցրու ժողովին»[20]։

[15] 2BoTU,58B. A. Goetze, նույնը, IV, 31.
[16] 2BoTU,58B. IV. 20—55.
[17] В. В. Струве, История древнего Востока, Москва. 1941, էջ 250։
[18] В. В. Иванов, Социальная организация индоевропейских племен, „Вестник истории мировой культуры", 1956, № 1, էջ 45։
[19] В. В. Иванов, Происхождение и история хеттского термина Panku—„собрание", „Вестник древней истории" (ВДИ). 1957, № 4, էջ 29—36։
[20] В. В. Иванов, նույնը, ВДИ, 1958, № 1, էջ 3։

Ինչպես երևում է, panku-ի իրավունքները շատ մեծ էին, քանի որ թագավորը վճիռ արձակելիս միշտ պետք է հաշվի առներ խորհրդի կամ ժողովրդի կարծիքը։ Պետք է ենթադրել, որ այսպիսի իրավունքներից էր օգտվում նաև հայասական ավագանին, որ երկարատև անօգուտ պատերազմներից հետո հավանաբար Ազզիի թագավոր Աննիյային զրկեց իր իշխանություններից։ Սակայն 15-րդ դ. մ. թ. ա. խեթական panku-ն իր գործունեությամբ արդեն անհամատեղելի էր դարձել ուժեղ իշխանություն և ինքնուրույնություն ձեռք բերած խեթական թագավորների գործունեության հետ և ցրվեց։

Ճիշտ չէ այն կարծիքը, որ խեթական արձանագրություններում հիշատակվող «Հայասայի մարդիկ» ասելով պետք է հասկանալ ողջ հայասական ժողովրդին, որ ցեղային միության բոլոր հարցերը վճռվում էին ժողովրդի կողմից[21]։

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում ցեղային ավագանին ամբողջովին անջատվել էր ցեղի նախկին իրավահավասար անդամներից և իրականացնում էր աճող, ավելի ունևոր, խոշոր տնտեսություն ունեցող անհատների պահանջները։

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե իրավական ի՞նչ վիճակում էին գտնվում խեթական աղբյուրներում հաճախակի հիշատակվող Հայասա-Ազզի, Ալշե և Իսուվա երկրները փախած ստրուկները, ինչպես և Հայասա տարված խեթական գերիները։

Այս երկրներում ապաստան գտած ստրուկները ազատվում էին իրավական նախկին վիճակից և որպես զինվորներ տեղաբնիկների հետ միասին մասնակցում էին արշավանքներին[22]։ Խեթական աղբյուրների թռուցիկ վկայությունները ցույց են տալիս, որ հայասական ցեղային միության ներսում ստրկական աշխատանքը դեռևս լայն կիրառում չէր գտել։

Խեթական հասարակարգին համեմատած հայասացիների մոտ գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական հարաբերությունների ավելի նախնական վիճակից էր բխում այն, որ Սուպպիլուլիումման իր տարեգրություններում հայասացիներին համարում է բարբարոսներ[23]։ Խեթական թագավորությունից փախած ստրուկների, ինչպես և գերիների զգալի մասը հավանաբար ամրացվում էր հողին և նրանց մշակությանն էին թողնում հողակտորներ, անհրաժեշտ չափով պետությանը կամ տիրոջը եկամտի զգալի մասը հատկացնելու պայմանով։ Խեթական թագավորները հաճախակի էին դիմում Հայասայի և Իսուվայի թագավորներին՝ փախած ստրուկներին ու գերիներին ետ վերադարձնելու համար, սակայն միշտ էլ մերժում էին ստանում։

Իր մի նամակում, ուղղված Ազզիի թագավոր Աննիյային, Մուրսիլ II-ը գրում է. «...Դու եկար և արշավեցիր Դանկուվա երկրի վրա, կողոպտեցիր այն, աշխատող մարդկանց, եզներ, և ոչխարներ ավար վերցրեցիր ու տարար Հայասա երկիրը...»։

Պատասխան նամակում Աննիյան գրում է. «Ինչ վերաբերում է նրանորի մասին ինձ գրում ես, չեմ կարող այն ստրուկներին (գերիներին—Լ. Բ.),

[21] Г. А. Меликишвили, Наири-Урарту, Тбилиси, 1954, էջ 87։
[22] 2BoTU, 48, III, § 34.
[23] B. Hrozny, Histoire de l'Asie Antérieure, Paris, 1947, էջ 201։
[24] 2BoTU,56B, A. Goetze, նույն տեղում, § 33, IV, 8—17.

որոնք այստեղ ինձ մոտ են եկել, քեզ վերադարձնել, չնայած դու նրանց պահանջում ես...»[24]։

Ոչ բոլոր գերիներն էին, որ ստրուկների էին վերածվում։ Նրանց մի մասն, անկասկած, օգտագործվում էր որպես ստրուկներ և գտնվում էր ոչ միայն թագավորի կամ տաճարների, այլև ավագանու տրամադրության տակ։ Մտնելով տերիտորիալ համայնքի մեջ, կամ գտնվելով խոշոր ընտանիքների կազմում, գերին կամ փախած ստրուկը ստանալով անհրաժեշտ հողակտոր, աշխատում էր այն տնտեսության համար, որին պատկանում էր։ Ստրուկի անմիջական տերը, երբ նա պետական ստրուկ չէր, հանդիսանում էր խոշոր ընտանիքի կամ համայնքի ավագը, որը միաժամանակ հավանաբար մտնում էր քաղաքի, երկրի ավագների խորհրդի կազմում։

Արժեքավոր է Սուպպիլուլիումայի դաշնագրի այն հատվածը, երբ նա Խուկկանայից պահանջում է խեթական ստրուկներին և գերիներին ետ վերադարձնել, միաժամանակ խորհուրդ տալիս, ասելով՝ «Ով որ խեթական գերիներին հանձնել չցանկանա և նրանց տեղը գաղտնի կպահի, բռնիր նրան ու ասա. «Ի՞նչու նրանց չես հանձնում»[25]։ Կասկածից վեր է, որ գերիներին չէին ցանկանում ետ վերադարձնել այն ավագանիները, որոնց պատկանում էին այդ ստրուկները և նրանք էին, որ ճնշում էին գործադրում ցեղային միության առաջնորդի վրա, նրանից պահանջելով հրաժարվելու գերիներին հանձնելու մտքից և միշտ բացասական պատասխաններ տալու խեթական թագավորներին։

Հայասական բանակը, որտեղ ընդգրկված էին նաև գերիները, զգալի ուժ էր իրենից ներկայացնում։ Բավական է նշել, որ միայն մի ճակատամարտում Կանանուվարայի տակ Հայասայի թագավորը մարտադաշտ էր հանել 10 հազար հետևակազոր և 700 մարտակառք[26]։

Ողջ նյութի քննարկումը ցույց է տալիս, որ 15—14-րդ դդ. մ. թ. ա. Փոքր Հայքի ու Բարձր Հայքի շրջաններում կազմավորված Հայասա-Ազզի ցեղային միության ներսում տեղի էին ունենում սոցիալ-տնտեսական լուրջ փոփոխություններ.

ա) Ցեղային միության գլուխ կանգնած առաջնորդը արդեն անջատվել էր նախկինում իրավահավասար ցեղախմբի մյուս անդամներից և խոշոր հարստություններ էր կուտակել։

բ) Հայասա-Ազզիի ցեղային միության առաջնորդի կամ թագավորի իրավունքները դեռևս սահմանափակվում են ավագանու կողմից· որն օժտված էր անսահմանափակ արտոնություններով և իրավունքներով։ Ցեղային ավագանիին կամ ավագների խորհրդին էր վերապահվում ցեղային միության առաջնորդի ընտրությունների անցկացումը, նրա իրավունքների և գործունեության վերահսկումը, իշխանազուրկ անելը և նոր թեկնածուի առաջադրումը։

գ) Ցեղային միության ներսում դեռևս չէր կիրառվում ստրկական աշխատանքը։ Ռազմագերիները և Հայասայում ապաստան գտած, հարևան երկրներից փախած ստրուկները ազատվում էին իրավական նախկին վիճակից։ Նրանց մի մասը վերածվում էր զինվորների և տեղարնիկների հետ միասին մասնակցում էր արշավանքներին, իսկ մյուս մասը ամրացվում էր հողին, պետությանը, տաճարներին կամ տիրոջը եկամտի զգալի մասը հատկացնելու պայմանով։

[25] J. Friedrich, նույն տեղում, § 34.
[26] 2BoTU,58B.